



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԿԱՐԱՆՏԻՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՉՀԱՆՁՆԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԿ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ
ՉՄԱՍՆԱԿՑԱԾ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՎՃԱՐԻ
ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ Դպրոց) կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), մասնակցությամբ Խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, անդամներ Լեոնիկ Հովհաննիսյանի, Նիկոլայ Հակոբյանի, Լյուդվիկ Դավթյանի և Քրիստիննե Գրիգորյանի,

դեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրության 13.5-րդ կետով և Խորհրդի 05.12.2020թ. «Կարանտինի պայմաններում անցկացված որակավորման քննությունը չհանձնած և որակավորման քննությանը անհարգելի պատճառով չմասնակցած ունկնդիրների հատուկ ուսուցման ծրագիրը» հաստատելու մասին թիվ 09/01-Լ որոշման հավելվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ՝

- Կարանտինի պայմաններում անցկացված որակավորման քննությունը չհանձնած, ինչպես նաև որակավորման քննությանն անհարգելի չմասնակցած ունկնդիրների հատուկ ուսուցում անցնելու վճարի չափը սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման հատուկ ուսուցումը սկսելու օրվանից եռօրյա ժամկետում:

ՀՀ փաստաբանական դպրոցի
կառավարման խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

05 դեկտեմբերի 2020թ.

թիվ 09/02-Լ

ք. Երևան